ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Վերջին հինգ ամիսների ընթացքում խիստ վատթարացել էր Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կոթողիկոս, Նորին Սուրբ Օծութիւն Տէր Տէր Վազգէն Առաջինի առողջական վիճակը:

Ամբողջ այդ ժամանակաշրջանում Վեհափառ Հայրապետը գտնուում էր Հանրապետութեան բժիշկներից կազմուած մի անձնակազմի մնայուն հսկողութեան ներքոյ:

Վեհափառ Հայրապետին հոգատարութեամբ շրջապատել էին Մայր Աթոռի հոգեւոր դասը եւ հայրենի կառավարութեան ղեկավարութիւնը:

Ապրիլ Հայրապետը ս/թ Մայիս ամսին Ֆրանսիայում եւս ենթարկուել էր բժշկական ստուգման ու բուժման:

Յունիս ամսից ի վեր, Նորին Սրբութիւնը Երեւանի կաթողիկոսական առանձնատանը գտնուում էր անկողնային վիճակում՝ ստանալով անհրաժեշտ բուժօգնութիւն:

Օգոստոսի 17-ին, Շաբաթ օրը, ժամը 19-ի սահմաններում, Վեհափառ Հայրապետի առողջական վիճակը կտրուկ վատթարացաւ: Թէեւ գգացուում էր գիտակցութեան առկայութիւն, սակայն Վեհափառ Հայրապետը աստիճանաբար կորցրեց խօսելու եւ արտայայտուելու կարողութիւնը:

Երբ կացութիւնն այլեւս անյոյս էր, Վեհափառ Հայրապետն ընդունեց Վերջին Հաղորդութիւնը:

Ամբողջ գիշեր Մայր Աթոռի միաբան եպիսկոպոսները հսկում էին Վեհափառ Հայրապետի մահճի մօտ՝ աղօթքների, սաղմոսների եւ Նարեկի ընթերցանութեամբ:

Ապրիլ Վեհափառ Հայրապետը Օգոստոսի 18-ին, Հինգշաբթի օրը, առաւօտեան ժամը 7-անց 15 րոպէին, 86-ամեայ հասակում, ի Տէր աւանդեց իր հոգին:

Թող Տէրն իր յաւիտենական օթեւանի մէջ ընդունի երջանկայիշատակ Վեհափառի հոգին:

Դիւան Մայր Աթոռի

18 օգոստոսի 1994 թ.
Ս. Էջմիածին

ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՀՀ առողջապահութեան նախարարի 18.08.94 հրամանով ստեղծուած մասնագիտական յանձնաժողովը, հետեւեալ կազմով՝

ՀՀ առողջապահութեան նախարար Ա. Բաբլոյեան (նախագահ), ՀՀ ԱՆ բուժկանխօգնութեան, գիտութեան վարչութեան պետ Գ. Սայադեան, ՀՀ ԱՆ 4-րդ գլխավարչութեան պետ Ս. Դիլանեան, Օնկոլոգիայի ԳՀԻ-ի տնօրէն, պրոֆեսոր Հ. Գալստեան, ՀՀ ԱՆ գլխաւոր պաթանատոմ, պրոֆեսոր Ա. Ալաւերդեան, թերապեւտ, պրոֆեսոր Ռ. Մամիկոնեան, նեւրոպաթալոգ, պրոֆեսոր Է. Գեւորգեան, ՀԱԳ-ի տնօրէն, բժշկական գիտութիւնների թեկնածու Ա. Երեմեանց, բժիշկ-քիմիոթերապեւտ, դոցենտ Լ. Հայրապետեան, բուժող բժիշկ Կ. Գուլեան, տուել է հետեւեալ մասնագիտական եզրակացութիւնը Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Առաջինի մահուան վերաբերեալ.

Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Առաջինը 1978 թուականից տառապում էր խրոնիկական լիմֆոլեյկոզով:

Մշտապէս լինելով բժշկական հսկողութեան ներքոյ եւ ստանալով համապատասխան բուժում, գտնուում էր կայուն ռեմիսիայի վիճակում: 1994 թուականին, հիւանդութիւնն ախտորոշելուց 16 տարի անց, նրա մօտ զարգացաւ իմունոբլաստ լիմֆոսարկոմայ, որի կապակցութեամբ ստանում էր համապատասխան բուժում:

Վեհափառը միաժամանակ տառապում էր խորանիստ երակների խրոնիկական թրոմբոֆլեբիտով, աորտայի եւ սրտի պսակաձեւ անօթների աթերոսկլերոզով եւ պարենխիմատոզ օրգանների դիստրոֆիայով:

Չնայած ձեռք առնուած ժամանակակից բոլոր միջոցներին Վեհափառի վիճակը վերջին երկու ամիսների ընթացքում աստիճանաբար վատանում էր: 1994 թուականի Օգոստոսի 18-ին, առաւօտեան ժամը 7 անց 15 րոպէին, կեանքի 86-րդ տարում, Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Առաջինը վախճանուեց:

Մահուան պատճառն էր խրոնիկական լիմֆոլեյկոզը, իմունոբլաստ լիմֆոսարկոման:

Հանձնաժողովի նախագահ
Հանձնաժողովի անդամներ

digitised by A.R.A.R.@